ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Սոցիալական փոփոխությունները Հայկական ՍՍՀ գյուղում զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1985, 188 էջ։*

Գյուղի, ինչպես և ամբողջ սովետական հասարակության սոցիալական զարգացումը օբյեկտիվ պատմական երեույթ է, որը կարգավորվում և ղեկավարվում է ՍՄԿԿ-ի քաղաքականության միջոցով։ Սոցիալիզմի կատարելագործման ժամանակաշրջանում ՍՍՀՄ սոցիալ-դասակարգային կառուցվածքում տեղի են ունենում էական առաջադիմական տեղաշարժեր, որոնց ընդհանուր ուղղությունը տանում է դեպի դասակարգային տարբերությունների հաղթահարում և վերացում։ Ինչպես նշված է ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից հաստատված կուսակցության ծրագրի նոր խմբագրությամբ, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դասակարգային տարբերությունների հաղթահարումը և անդասակարգ հասարակության հաստատումը տեղի կունենան հիմնականում սոցիալիստական փուլի պատմական շրջանակներում, իսկ նշված տարբերությունների լրիվ հաղթահարումը և սոցիալապես համասեռ հասարակության կազմավորումը կավարտվեն կոմունիզմի բարձրագույն փուլում։

Սովետական պատմաբանները և այլ գիտությունների մասնագետները զգալի աշխատանք են կատարել ժամանակակից գյուղի սոցիալ-դասակարգային տեղաշարժերն ուսումնասիրելու ուղղությամբ։ Նախապես նշենք, որ գրախոսվող աշխատությունը Հայաստանում այդ պրոբլեմի ուսումնասիրության առաջին, հաջողված փորձերից է։

Վ. Հակոբյանը Սովետական Հայաստանի նյութերի և վիճակագրական տվյալների հիման վրա հետազոտել է թեմայի հիմնական հարցերը, որպիսիք են գյուղի սոցիալական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները և գյուղի ստեղծագործական ու հոգևոր կյանքի վերելքը։ Գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման համար, ինչպես նշված է գրքում, կարևոր ուղենիշ բացեց ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումը։ Նրանով սկիզբ առավ կուսակցության ժամանակակից ագրարային քաղաքականությունը։ Հենվելով տնտեսական զարգացման օրենքների վրա, պլենումը մի շարք միջոցառումներ մշակեց գյուղատնտեսության զարգացումը ապահովելու համար՝ բարձրացվեց կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատողների նյութական շահագրգռվածությունը, հաստատվեց գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների կայունություն (տևական ժամանակաշրջանի համար), զարկ տրվեց գյուղատնտեսության մեքենայացմանը, քիմիացմանը և մելիորացիային՝ որպես տնտեսության արդյունավետության բարձրացման գործոնների։ Բազմաթիվ օրինակների և թվական տվյալների օգնությամբ գրքում ցույց են տրված հանրապետության գյուղի ձեռք բերած նվաճումները։ Հեղինակը հատուկ անդրադարձել է գյուղի սոցիալ-տնտեսական կյանքի այնպիսի նոր երևույթի, ինչպիսին ինտեգրացված էկոնոմիկայի զարգացումն է, միջտնտեսային միավորումների և ագրոարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը։ Ցնցած Հայաստանը, ի տարբերություն միութենական այլ հանրապետությունների (Մոլդավիա, ՌՍՖՍՀ և այլն), համեմատաբար ուշ ոտք դրեց տվյալ ուղին, այնուամենայնիվ կարճ ժամանակամիջոցում այստեղ ևս հանդես եկան միացյալ միավորումներ և ձեռնարկություններ, որոնց միջոցով, ինչպես ճիշտ եզրակացնում է Վ. Հակոբյանը, խորանում է մասնագիտացումը, պայմաններ են ստեղծվում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արդյունավետ տնտեսություն վարելու համար։ Ըստ գրքում բերված տվյալների (էջ 41) միջտնտեսային ձեռնարկություններում արտադրանքի մեկ միավորի վրա 1,5—2 անգամ ավելի քիչ աշխատանքային ծախս էր կատարվում, քան ոչ մասնագիտացված տնտեսություններում, իսկ արտադրանքի ինքնարժեքը ցածր էր 1,5 անգամ։ Միջտնտեսային ձեռնարկությունների թվում իշխում էին անասնապահական ուղղություն ունեցողները, որը պայմանավորված էր, ըստ հեղինակի, այդ ճյուղի ավելի արագ, հեշտ ու նպատակահարմար մասնագիտացումով, ի տարբերություն երկրագործության։ Իսկ երկրագործության մեջ զարգանում էին սովխոզ-գործարանի և ագրոարդյունաբերական ինտեգրացիայի այլ ձևերը։ Ի մի բերելով 1960—1970-ական թվականների գյուղատնտեսության զարգացման նվաճումները, գրքում միաժամանակ ցույց տրվում, որ ամբողջ երկրում տնտեսության այդ ճյուղի մակարդակը հեռու էր բավարար լինելուց, ուստի կոմունիստական կուսակցության որոշմամբ մշակվեց ՍՍՀՄ պարենային ծրագիրը։

որի ընդունումը նշանավորեց «կուսակցության արդի ագրարային քաղաքականության նոր փուլը» (էջ 46)։

Աշխատության մեջ հիմնականը և ամենաարժեքավորը հայկական գյուղի սոցիալ-դասակարգային կառուցվածքի ուսումնասիրությունն է, այդ կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների լուսաբանումը, որը Վ. Հակոբյանը կատարել է հմուտ կերպով և գիտական խորությամբ։ Այս պրոբլեմի մեջ առանձնացված է երկու ինքնուրույն հարց՝ գյուղի սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխությունների հիմնական ուղղությունները և բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության մերձեցումն ու սոցիալ-դասակարգային տարբերությունների աստիճանական հաղթահարումը։

1960—1980 թթ. գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման հետ միաժամանակ արմատական փոփոխություններ կատարվեցին նաև գյուղական կյանքի մյուս բոլոր կողմերում, տեղի էին ունենում սոցիալական նոր երևույթներ՝ փոխվում էր գյուղի սոցիալական տեսքը, բնակչության կազմը, կենցաղն ու կուլտուրան։ Արձանագրելով այդ պատմական իրողությունը, այնուհետև հեղինակն անդրադարձել է նշված փոփոխությունների վերլուծությանը։

Հայկական գյուղում նկատելի էր բնակչության այն մասի աճը, որը զբաղված էր ոչ արտադրական ոլորտում, շարունակվում էր գյուղական բնակչության միգրացիան, նրա տեղաշարժը դեպի քաղաք՝ փոխելով գյուղի ու քաղաքի բնակչության քանակական հարաբերակցությունը։ Դրան նպաստում էին գյուղատնտեսության մեքենայացումը, աշխատանքային, կուլտուրա-կենցաղային, սոցիալ-հոգեբանական գործոնները, ինչպես նաև արհեստական ուրբանիզացման քաղաքականությունը, որն այդ ժամանակաշրջանում վարվում էր Հայաստանում։ Վերջինս պայմանավորված էր այն սխալ տեսակետով, թե իբր հանրապետության գյուղատնտեսությունը չունի զարգացման հեռանկարներ։ 1970-ական թվականների կեսերից Հայաստանի կոմունիստական կուսակցությունը միջոցառումներ է իրականացնում մասնավորապես Երևան քաղաքի բնակչության խիտ աճը սահմանափակելու և գյուղական բնակչության համար տեղում մնալու և աշխատելու բարվոք պայմաններ ստեղծելու նպատակով։ Գրքում բերված տվյալների համաձայն 1959—1979 թթ. գյուղից քաղաք է մեկնել 200 հազար մարդ։ Գյուղական բնակչության հարաբերական նվազումը (այն ընդհանուր երևույթ է ՍՍՀՄ-ի համար) ուղեկցվում էր նրա բացարձակ աճով (ի տարբերություն մի շարք հանրապետությունների) շնորհիվ բնական վերարտադրության բարձր մակարդակի (հատկապես ագրբեջանցիների ու քրդերի մոտ)։ Գյուղական բնակչության միգրացիայի հարցի կապակցությամբ Վ. Հակոբյանը պաշտպանում է պատմագրության մեջ արտահայտված այն տեսակետը, որ այդ երևույթը կրում էր ինչպես տարերային, այնպես էլ կազմակերպված բնույթ, որ այն չի կարելի բացատրել միակողմանիորեն, ինչպես անում են որոշ ուսումնասիրողներ։

Գյուղական բնակչության քանակական փոփոխություններին ուղեկից էին նրա որակական կազմի էական կառուցվածքային տեղաշարժերը։ Աշխատավորների մեջ աճում էր բանվոր դասակարգի գյուղական շերտը, մտավորականությունը և բարձրորակ (ֆիզիկական և մտավոր) աշխատանքի տեր մարդկանց թիվը։ Այդ երևույթներն օրինաչափ էին նաև քաղաքային բնակչության համար։ Սակայն ի տարբերություն քաղաքայինի, գյուղական բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքում, գյուղի կյանքի յուրահատուկ գծերով պայմանավորված (սոցիալիստական սեփականության երկու ձևերի գոյություն, գյուղատնտեսական արտադրության ինքնատիպություն, ոչ արտադրական ճյուղերի թերզարգացածություն և այլն), դրսևորվում էին մի շարք առանձնահատկություններ. գյուղական բնակչությունն ընդգրկում է սովետական հասարակության բոլոր դասակարգերն ու սոցիալական խմբերը՝ կոլտնտեսային գյուղացիություն, բանվոր դասակարգի ագրարային շերտ, սպասարկման բնագավառի և գյուղական արդյունաբերության աշխատողներ, մտավորականության մի մասը։ Գյուղում համեմատաբար մեծ է ոչ որակյալ և ցածր որակավորում պահանջող ֆիզիկական աշխատանք կատարողների բաժինը։ Այստեղ փոքր է մտավոր աշխատողների թիվը։

Բնակչության նշված խմբերի աճը տեղի էր ունենում կոլտնտեսային գյուղացիության կրճատման հաշվին։ Վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսության աշխատողների մեջ 1960—1981 թթ. 86-ից իջել էր 36%-ի, մինչդեռ սովխոզների բանվորների թիվն աճել էր 4,5 անգամ։ Սա, ինչպես նկատում է հեղինակը, որակական հակայական տեղաշարժ էր, որի շնորհիվ «բանվոր դասակարգը, որի սոցիալ-քաղաքական դերը դժվար է գերագնահատել, դարձավ գյուղի կենտրոնական դեմքը» (էջ 56)։ Ըստ զբաղվածության ոլորտների, գյուղական բանվորությունը

բաղկացած է ինդուստրիալ, սպասարկման բնագավառի, ոչ արտադրական ճյուղերի, ագրոարդյունաբերական և ագրարային ջոկատներից։ Ելնելով հարցի կարևորությունից, Վ. Հակոբյանը հատկապես կանգ է առել ագրարային ջոկատի կազմում-կատարված քանակական և որակական փոփոխությունների ուսումնասիրության վրա։ Այդ ջոկատն է անմիջականորեն զբաղված գյուղատնտեսական արտադրության մեջ և ներառնում է սովխոզների, պետական այլ տնտեսությունների և գյուղատնտեսական օժանդակ ձեռնարկությունների աշխատողներին։

Վ. Հակոբյանի դասախոսվող գրքում հանգամանորեն շարադրված են ինչպես բանվոր դասակարգի ագրարային ջոկատի (հատկապես սովխոզային բանվորության), այնպես էլ կոլտնտեսային գյուղացիության ներդասակարգային ստորաբաժանման հարցերը, այդ կապակցությամբ պատմագրության մեջ գոյություն ունեցող տեսակետները, որոնց նկատմամբ հեղինակն արտահայտում է իր վերաբերմունքը։ Փաստական նյութի և վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա նա հանգում է այն եզրակացության, որ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված բանվորների ու գյուղացիների մեջ քանակական փոփոխությունների հետ միաժամանակ (առաջինների ավելացում, երկրորդների արագ նվազում) կատարվում են որակական մեծ տեղաշարժեր՝ մեծանում է բարձրորակ աշխատանք կատարողների տեսակարար կշիռը։

Քննվող աշխատության հետաքրքիր մասերից է գյուղական մտավորականությանը նվիրված հարցը, որի բնույթի շուրջ գրականության մեջ արտահայտվել են տարբեր, երբեմն իրարամերժ տեսակետներ։ Վերլուծելով դրանք, հեղինակն առաջադրում է ինքնուրույն և ընդունելի տեսակետ։ «Ճիշտ չէ արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը դարձնել ելակետ,— կարդում ենք գրքում,— և կոլտնտեսային մտավորականներին մտցնել գյուղացիության դասակարգի մեջ։ Նրանք գյուղատնտեսական այլ կատեգորիաների մտավորականների հետ մրցանում են սովետական մտավորականության խավի մեջ, հանդիսանալով վերջինիս ինքնուրույն՝ գյուղական արտադրական ջոկատը» (էջ 93)։ Այս դեպքում ևս լուսաբանված է սոցիալական այդ խավի ներքին կառուցվածքը՝ ոչ արտադրական և արտադրական մտավորականության կազմում կատարված փոփոխությունները (առաջին խումբն աճում է ավելի արագ, քան երկրորդը)։

Գյուղի սոցիալական շերտերի քանակական և որակական փոփոխությունները նպաստում են նրանց միջև, ինչպես նաև նրանց ներսում գոյություն ունեցող էական տարբերությունների հաղթահարմանը, աստիճանաբար տանում են անդասակարգ հասարակության կազմավորման ուղիով։

Գյուղի սոցիալական զարգացման անհրաժեշտ և անխզելի տարրերից է հոգևոր-մշակութային կյանքի վերելքը, որն ուսումնասիրված է առանձին գլխով։ Հեղինակի հանրագումարային եզրակացությունն այն է, որ սոցիալիզմի կատարելագործման տարիներին «գյուղում կուսակցության նպատակաուղղված սոցիալ-տնտեսական քաղաքականության կիրառման շնորհիվ դիտվում է դասակարգերի մերձեցում ինչպես սեփականությունների ձևով, այնպես էլ եկամուտների ստացման չափերով, կենսամակարդակներով, կրթությամբ և այլ կողմերով» (էջ 122)։

Գրախոսվող գրքում, սակայն, տեղ են գտել նաև առանձին, մասնավոր բնույթ կրող թերություններ։ Այսպես, հեղինակը գրքի մի քանի էջերում (74, 102, 165) օգտագործում է «կոլտնտեսությունների սովխոզացում» արտահայտությունը։ Հայտնի է, որ կոլտնտեսությունների մի մասի, հիմնականում տնտեսապես ետ մնացող, վերակառուցումը սովետական տնտեսությունների տեղի է ունեցել կոլտնտեսականների ընդհանուր ժողովների որոշումներով, կամավորության սկզբունքով։ Մինչդեռ հիշյալ արտահայտությունից կարող է ստացվել և այն տպավորությունը, թե իբր նշված վերակառուցումը կատարվել է ոչ կոլտնտեսականների կամքով։ 102-րդ էջում կարդում ենք. «Տնտեսապես ամուր հիմքի վրա կանգնած կոլտնտեսությունների մեծ մասը սովետական տնտեսությունների վերափոխվելով ոչ միայն չշարունակեցին հետագա վերելքի ուղին, այլ ընդհակառակը՝ հետադիմեցին»։ Այս դրույթը գուցե և ճիշտ է, սակայն այն փաստերով հիմնավորված չէ։ Դրքում հստակություն չկա այն հարցում, թե մեր երկրում երբ կարող է տեղի ունենալ դասակարգային տարբերությունների հաղթահարումը։ Մինչդեռ հայտնի է, որ այդ հարցը շատ պարզորոշ դրվեց դեռևս ՍՄԿԿ XXVI համագումարում և հետագա լարգացում ստացավ XXVII համագումարում։

Ընդհանուր առմամբ Վ. Հակոբյանի գրախոսվող մենագրությունը լուրջ գիտական հետազոտություն է, որ ամբողջական պատկերացում է տալիս ժամանակակից գյուղի սոցիալ-դասակարգային վիճակի, սոցիալական հարաբերությունների զարգացման միտումների մասին։

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր